



90. ՉԱՐԻ ԱՆՐԸ

Հնքոնն ծաղիկ մին աղվես, ոնց ա ինըմ, օրերից մին օր մին չալպըտուրիկ ծտի քնած տեղը փրոնըմ ա, որ ուտի, ծխտը ասըմ ա.—Աղվե՛ս ապեր, գիղըմ եմ՝ սոված ես, ինձ ուտիլու վես, համա մին աղո՛թկ արա հոքուս մհար, եղո կե՛ր, թիւ աչկըտ մին պան կըտեսնա:

Աղվեսը մտածըմ ա. «Ծխտը խելունք ա խոսըմ, ես էլ քրիստոնյա եմ, խի չի պիտի աղոթկ անեմ»: Պերանն ուզըմ ա պանցի, թիւ աղոթկ ասի, ծխտը թրոնըմ ա նստըմ ծառի ճղանը:

—Ա՛յ ծխտ, դո՛ւզ ա, տո՛ւ ինձ խափեցիր, թոար, համա ես սոված մնացի, կոնե մին տեղ նշա՛նց տու, շտեղ կարամ քըշտանամ:

—Շա՛տ լիւժ, եննես ե՛կ, մին նհենց տեղ տանեմ, էնքան լիւփես, որ տրաքվես:

Ծխտը ճըղից ճուղ ա թրոնըմ, աղվեսն էլ տափովը քաշ կանովը ընդրա եննեն ա քինըմ: Շատ որ քինըմ են, մին էլ տենըմ են մին կնիկ չոլըմն ախշադող մարթին հաց ա տանիլիս ինըմ: Կընգա մին ծեռին մին կուլա կաթ ա ինըմ, էն մին ծեռին դաստախտունըմը փրթաթած ուտիլիք, փեչկիցն էլ մին խոխա կախ:

—Մհի տո՛ւ ըստեղ ըսպասի՛, —աղվեսին ասըմ ա ծխտը, —ես նհենց կանեմ, որ կնիկը ծեռքի իլածը տնի տափին հու ընգնի իմ քամակիցը: Եղո տո՛ւ թափանըտ կըլցնես, իչքան կուզես:

Ծխտը թրոնըմ ա քարի մընան վեր ընգնըմ կնգա առաչին:

—Նաննա՛, փրոնի՛, —ասըմ ա խոխեն, մոր փեչկը պանց թողըմ հու վազ տամ: Մերն էլ ծեռի իլած-չիլածը տնըմ ա տափին, ինքն ընգնըմ ծտի քամակիցը, որ փրոնեն:

Հենց մոտկանըմ են ծտին, էս թրոնըմ ա մին քիչ հեռու: Սըհենց ծխտը թրոնըմ ա, ըստանք վազ են տալի, մինչու խելաք հեռվանըմ են: Էտ վանդըմը աղվեսը վրան յա պրծընըմ, լիւփըմ, ինչ որ կար, կաթն էլ վըրովը լակըմ, փորը տորզըցնըմ: Եփ մեր ու տղա ետ են տանըմ, տենըմ են՝ ո՛չ հաց կա, ո՛չ կաթ: Քոռ ու փոշման ետ են տանըմ՝ թիւզանդան հաց պերիլի:

Չալպըտուրիկը թըռնում կնչիս ա աղվեսի կուշտը, տեսնում ա հեսա մեկնվել ա ծառի տակին հու մըրափրմ ա:

—Հը, աղվես'ս ապեր, —ասում ա ծիտը, —յանի կչտացա՞ր:

—Հա', ծի'տ ջան, թի՛ս քե լսի ոչ, ուտի, կեռքիս տակը զատ չէր ընգնիլու, լի՛վ կըչտըցրար տիւ ինձ: Համա լավ կիներ՝ մին քիչ վազ-վազ անի, կերածըս մարսի:

—Դե որ ըտենց ա, ե'կ եննիցս, —ասում ա ծիտը:

Ուրիւր աչկ տինիլով քինում են: Բնւրդան քուերի ղաթիցը մին բոլիւ չներ վրա են պրծնում, որ աղվեսի պոռթը քամուն տան: Աղվեսը, որ չորս ոտ ուներ, չորսն էլ փոխ ա առնում, փախնում մըն-նում մին փչակ:

Շները պաղզըմ են փչակի առաչին:

Փչակըմը աղվեսը հըրցնում ա ոններին:

—Տիւք ինչո՞վ ինձ քոմանգ արաք:

—Թի՛ս մենք չինինք, քե ո՞վ կըպերեր ըստեղ:

—Աչկե'ր, տիւք ինչո՞վ քոմանգ իլաք:

—Թի՛ս մենք չներին տեսնինք ոչ, մհի քե քրքրել ին:

—Բա տիւ ի՞նչ իր անում, ա'յ իմ ծաղիկ հնքո՛ւ:

—Ես էլ չներին ի ճընապեն նշանց տալիս:

Աղվեսը չարանում ա հնքվի վրեն, նեղսըրտըմ հու ընդան փչա-կիցը տիւս հանում: Շները հենց ըտան ին սպասում, հնքվիցը փըռ-նում են, աղվեսին տիւս քաշում, մին դոյընջան քլոլըմ, սըպանում, պոռթը քամուն տալիս:

Միտը որ թըմաչա էր անում, ասում ա. —Չարի ախրը սըհենց ա ինում:

